ՔԱՂՎԱԾՔ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 թվականի «ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 36-Ա ՈՐՈՇՈՒՄԻՑ (ՆԻՍ N 2)

համայնքի ավագանին որոշում է՝

1. Գավառ համայնքի 2024 թվականի բյուջեում հատկացնել 10.000.000 դրամ գումար՝ 2024 թվականի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:

2. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում են կանաչապատում, կրթություն, սպորտ, երիտասարդություն և մշակույթ ոլորտները՝ որպես առաջնահերթություն:

3. Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն՝ շահագրգիռ յուրաքանչյուր ոք, համայնքի բնակիչները, նրանց ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերը, քաղաքացիական հասարակությունը, հասարակական կազմակերպությունները:

4. Համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը՝ որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2024 թվականի ՄԺԾԾ-ում, տարեկան աշխատանքային պլանում և բյուջեում:

2) համայնքի բնակիչների կողմից քվեարկության արդյունքում ընտրված առաջարկը(ները) ներկայացնել ավագանու հավանությանը:

3) իրականացնել վերահսկողություն մասնակցային բյուջետավորման գործընթացի նկատմամբ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԴԱՄՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ
ԱՐԵՎՇԱՏՅԱՆ ԼԱՎՐԻԿ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱԼՏԵՐ
ԳՈՒԼԱԲՅԱՆ ՀՐԱՅՐ
ԴԱՆՈՅԱՆ ՕՆԻԿ
ԴԱՇՏՈՅԱՆ ԳՐԻԳՈՐ
ԶԱԽԱՐՅԱՆ ՆՈՐԱՅՐ
ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ ԱՐՏԱԿ
ԽԱՆԴԱՆՅԱՆ ՆԱԻՐԱ
ԿԻՐԱԿՈՍՅԱՆ ԶԱՐՈՒՀԻ
ԿՈՍՏԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԱՐԻԱՄ
ՄԱՐՈՒԽՅԱՆ ԱՐՄԱՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԻԿ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
ՄԿՐՏՉՅԱՆ ԳՆԵԼ
ՊԵՏՈՅԱՆ ԱՆԻ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ

Համայնքի ղեկավար՝ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝
Աշխատակազմի քարտուղարի
Պարտականությունները կատարող՝ ԱՐԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ